

ՇԱՊԻԿ

Խ Ա Ղ Ր Ա Ռ Ե Ր Թ

ԽՄԲԱԳՐԱԳԵՏՆ Է՝ ԸՆԿԵՐ ԿԻԿՕ (Գր. Փոստասան)

ԽՄԲԱԳՐԱԳՐԱԳՆԵՐ՝ ԵՍ, ԳՈՒՆ, ԱՆ, ՄԵՆԵ, ԳՈՒԲ, ԱՆՈՒՆ, ԳՆԱՆՆԵ,

ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐ՝ ԱՐՇԱԿՈՒՆՆԵ ՄԵՐԱԶՅԱՆ, Ե. Ա. ԳՐԱԳՐԱԳՐԱԳՆԵՐ,

Վ. ԱՐՇԱԿՈՒՆՆԵ, Ա. ԳՐԱԳՐԱԳՐԱԳՆԵՐ

(Փոփոխելի)

Տ Ա Ս Ն Ա Բ Ա Ն Ե Ա Յ

Սս եմ ձ՞ծաղիկ և ինչ գաս ձ՞ծաղիկ չպիտի նսնջնալ:

Իմ անունս պարզապէս չեմ արժանանալ ինչ ալ տունէ:

Իմ փառս կանխիկ պիտի դրկէ:

Սս մէկ ժառանգ պէտք է յարգէ և գլխուն վրայ նսնջնէ զիս:

Ո՛չ ոք պէտք է աչք ընե՛տ իմ փառայիս, քո՛ղ աչք ունեցողին աւերէ:

Ելլայ:

Պէտք չէ իմ փառս ձեր կողորդ անցրնէ:

Պէտք չէ նեղանալ, երբ ձեր զրկած յողուածները չեստես:

Պէտք է ձայն անգամ չհանել և գլխուն վրայ դնել, երբ ձեզի՞

դեմ գրուի այս սխալներուն մեջ:

Մեր շատ բարկանալ, պէտք չէ մեղանշել:

Սս երբ մեղանշելու մօտ ըլլալ, պէտք է... քաջախ խմել:

Թիի 94

Տնօրէն Ռ. Սազանան

Հասցէ՝ Ղալաթիա, Գուրուչուլու խան թիւ 7

ԵՐԵՎԱՆԻ 3 ՄԱՐՏ 1909 ۷ در عا ۳۰ غز ۳۰ قورشولی خاندە نومرو

ՄԱՐԴ ԶԿԱՅ!!! ԶԿԱՅ, ԶԿԱՅ!!!

Շատ զարմանալի պիտի գտնէք, բերաննիդ բաց պիտի մնայ և շատեր ձեզի՛ք ամենայն կիկոյարար պիտի բարեհաճին խնդալ վրաս. երբ մէկէն ի մէկ վերնագիրս կարգան և յետոյ ինքզինքնին հայելին մէջ նային:

Մենք մարդ չենք պիտի պոռան. և դուք շատեր Բերայի նախադատ Ատենանին մօտ ինձի դէմ դատ բանան, ինչպէս դատ պիտի բանայ եղեր, մի ոմն Արիստակէս Գասպարեան, զոր բարեհաճեր էինք մարդու տեղ դնել և իրեն քանի մը հարցումներ ուղղել:

Շատ ճիշդ է, դուք ալ մարդ էք. ճիշդ ինչպէս որ մարդու նմանելու շատ մը կողմեր ունին մեր ազգ. թիկնաթուռները, բայց մարդէ մարդ այնքան մեծ տարբերութիւն կայ, որքան կայ անգլիական ոսկիին և քրմիցին, Միքատային և... Արշակ Ալպոյանեանին միջեւ, որինակի համար:

Բայց երբ մարդ չկայ կը պոռամ, յրաղիկի բեմէն, երբ բանս գործս ձգած, Դիօզինդեան լապտերով մարդ կը փնտռեմ, և երբ Ընկեր կիցիս կը հաւաստէ ձեզի՛ 20 բունթօ գիրով թէ՛ մարդ չունինք, դուք պէտք չէ թերահաւատի շարժումներ ընէք, այլ կլեւելու էք, ճիշդ ինչպէս որ օրը օրին կլեւեցիք թուրք կառավարութեան խոստումները շեղիկի ներսու հերսուութիւնները և մեր... կայսրութիւնը:

Կլեւել ալ տեսակ մը առաքինութիւն է, երբ կլեւելուն միացնէք նաև կարկառաւ ընելու իրատ բարի սովորութիւնը բայց ա՛լ աւելի մեծ առաքինութիւն և Աստուածահաճոյ Լեւոնի Գրիգորի մը ըրած կ'ըլլաք երբ ըրոր ըստածները կլէք... առանց կարկառայի:

Մարդ չկայ, կ'ըսէինք: Ասիկա ամբաստանութիւն մըն է, թուրքի պէս ընդարձակածաւալ, քաղաքակրթութեամբ, զարգացած և յառաջդիմած (բոլորն ալ ապառնի) երկրի մը դէմ զոր պէտք է հաստատենք, եթէ ոչ կառավարութիւնը վաղը մեզի դէմ դատ կը բանայ,

իրբեւ խոտարար և ծակը կը խօթէ: Եւ երբ անգամ մը զիս կամ թուան ծակը նետեն, անկէց անդին կրնաք խերը տեսնել ձեր Սահմանադրութեան: Որովհետեւ ամէն բան աստիճանացոյց մը և աստիճանաչափ մը ունի և թուրքի աստիճանաչափերը ես ու թուրք ենք:

Ուրեմն աղօթեցէք ոչ թէ Մէկ Մարդուն համար հին օրերու մէջ ձեր ըրած կեղծուպատիր մաղթանքներուն և աղօթքներուն պէս, այլ սրտաբուխ աղօթեցէք որպէս զի Տէրն մեր Յիսուս Բրիստոս, Փրկիչն ամենայն աշխարհի, մեզի պարգևէ ձեզի: Ասիկա ըսելու ձեռքն է լոկ, եթէ ոչ մեզի ձեզի պարգևելով ի՛նչ կ'առնէք, մենք ո՛չ գոհարեղէն ենք և ո՛չ ալ արթնթուղթ որ բանի մը ծառայենք:

Ու մինչև այն օրը որ ծակէն դուրս ենք երկուքս, միշտ վստահ եղէք որ պիտի ըսենք ի՛նչ որ կը մտածենք, ինչ որ կը տեսնենք և շատ անգամ ինչ որ կը... դուշակենք:

Այո՛ բարեկամներս, Սահմանադրական թուրքի մէջ բաժարձա կապէս մարդ չկայ կ'ըսեմ այժմ:

Մարդ շատ կայ և ճիշդ է որ անգլիսթիւով տամատ կայ, սերիւններով պիտուէ կայ և սեքեթներով ու քիւմիկներով տանձեր կան, որոնք մարդու սովի միջոցին իրբեւ մարդ կը գործածուին:

Յորենի համատարած սով մը կայ... Հայաստանի բոլոր գաւառներուն մէջ և մարդու պէս մարդոց անուելի սով մը կայ... կառավարական պաշտօնեաններու:

Ամէն նահանգ իր վայրին ունի, միւթէսարըֆը և դայմագամը և ըստ երեւոյթի ամէն տեղ, փառք Աստուծոյ մարդ կայ:

Բայց անոնց հարիւրին ութսունը վայտէ, քարէ եւ կամէ... հերթիներ են. որոնք կը թալլեն, կաշառք կ'առնեն, միշտ Իսլամին կողմը կը տաչեն պէտք եղած տեսն անդէն Հայեր Չարդել կ'ուտան, Հայ կիներ ու աղջիկներ կ'առեանգեն և շաբաթը քսան եւ չորս անգամ ալ կը հեռագրեն Պոլիս թէ՛ սայիի Շահակտե ասայիլ պիտի սորը:

Դուք կը կարծէք կոր որ, մարդ միայն այն ատենը կը կատարէ երբ

կատարած չուն մը կը խածնէ զինքը. Յուլիս 11էն երկու ամիս վերջը գրեթէ ամէն օր կը կատարի, հակառակ անոր կատարած չունի մը երեսը տեսած չունիմ:

Թալլէ՛, սպաննէ՛ եւ յետոյ... հեռագրէ Ասայիլ պիտի քեմալ սորը, Բանտարկէ՛, տակը զրկէ բանսին մէջ խղզէ, ծեծէ, տանջէ, աքսորէ, հողերը գրաւէ, կիներ ու ը աղջիկը լեռը հանէ և կամ կըռնակէն շարկը հանէ զինուորական սուրբի փոխարէն եւ անկէ անդին ետդի պէս երեսը կլեւելու համար, հեռագրէ Ասայիլը պիտի քեմալ սորը:

Ի՛նչպէս չէ, շնորհիւ Սուլթանին այս երկիրն ալ եթէ ասայիլ չունենայ, ո՛ր երկիրը կ'ուսնենայ:

Մարդ լեցուն մարդ, մանաւանդ Պոլսոյ փողոցներուն մէջ աչքդ դոցէ և հարիւրներով բռնէ անոնցմէ: Մարդ չատ...:

Բայց այս առատութեան մէջ իսկ դացէք երեւակայեցէք որ, պիտուէն բարեկարգելու համար ձեր բանասայէն մարդ կը բերենք, ծովուն համար Անգլիայէն, բանակին համար Դերմանիայէն, և եթէ գործերը այսպէս երթան վաղը միւս օր մենք մեր անձը կառավարելու համար ալ եւրոպայէն մարդ պիտի բերենք:

Քառասուն միլիոն քնակիչ և դարձեալ մարդու սով...:

Կառավարութիւնը միտք ունի եղեր կարգ մը պաշտօնեաններ փոխել, բայց նկատելով որ մարդ չկայ, առ այժմ այդ պաշտօնեանները չպիտի փոխէ, որպէս զի կամ անոնք մարդ ըլլան և կամ մարդ բուննի Ենտի Գուլէի պարտէզին մէջ:

Եւ բնական է որ այս կիտիլով թուրքի ալ խրոյս սօյէն մարդ կ'ըլլայ:

Ինչ անուշ երկիր և ինչ սիրուն երկիր ուր այնքան լեցուն չուն կայ, ուր և ոչ մէկ ատեն... հացի սով կը քաշենք, երկիր մը ուր շունները աւելի կը պատուուին քան մարդիկ և անկասկած էք թէ ասանկ երկիր մը երբեք ետ չի մնար, ընդհակառակը մամական 120 հանգոյց արագութեամբ առաջ կ'երթայ:

Բոլոր գաւառներու մէջ, բացի մէկ քանի պղտիկ բացառութիւններէ, մարդու պէս վայր մը չկայ. թէ և

թուրք կառավարութիւնը, Բ. դուռը, Հիւլի փաշա և Միւսթէշարը կը պնդեն թէ՛ անոնք ամէնքն ալ մարդ են, թէ երկու ոտք ունին, աչք, ձեռք և իրենց մարմինն վրայ գլուխ մը ունին. թէ անոնք մարդու դասակ են և հայրենիքը 32 տարիէ ի վեր անոնց շնորհիւ կրցած է այսքան յառաջանալ:

Ասոնք ըսողները մեծ մարդիկ են և մեծ մարդիկ երբեք սուտ չեն խօսիր. իսկ երբ խօսին... պաշտօնական սուտեր կը խօսին միայն, որոնց մասին կ'երեւի նախապէս ներողութեան գիրքը ստացած են Մարգարէն:

Եթէ ոչ, ի՛նչպէս կ'ըլլայ որ Հայաստանի մէջ սով կը տիրէ և սովէ մարդ կը մեռնի, ունեւորները կը դժբանայ, Մուշի մէջ հայ կիներ, բռնի կ'իսլամացուին և հոս մեր ամենատղորմած վարչապետ և Ընկ.՝ Թազավիմը վազապին օգնութեամբ կը հերքեն, կոյու կը հերքեն այդ ամէնը, նկատելով որ թուրքի յետադիմութեան միակ պատճառը այդ տեսակ բաներու սանձարձակ գրուելն է և մինչև այսօր չի գրուելով և Մամուլը կաշկանդուած ըլլալուն պատճառով է որ թուրքի հզոր տէրութիւններու կարգը անցած է. իր Մարիէին սընտուկը քաշմիլ կ'ըլլայ և բացարձակապէս սուտ է երբ չարամիտներ կ'ըսեն թէ այդ անտուկին մէջ մուկ ինկած է և կամ մէջը ինոզը հաղար կտոր կ'ըլլայ:

Բարեկամներ հաւատացէք որ թուրքի մէջ հացի սով չկայ, ըստ թազավիմը վազապին, իսկ մարդու սով երբե՛ք:

Արդէն թուրքի մէջ ի՛նչ բան չկայ որ...:

Ո՛ր կողմերնիս պակաս է: Մամի փաշայի պէս ոստիկանական նախարար մը չունինք:

Չիվէր պէյի պէս քաղաքապետ մը չունինք: Օսմ. Դամիէի պէս... քօմիդէ-ճինը չունինք, որոնք մարդու կը նմանին ամէն կերպով. պիտի ունին. մարդու ձեւեր ու հիլթեր ունին, և որոնք աշխարհի Փրկիչին, Յիսուս Բրիստոսի նմանելու համար, իրենք ալ թուրքի փրկեցին:

Մարդու խրոյս չկայ. երբե՛ք. ինչո՞ւ մարդու տեղ չէք դնել

մեր հրաշապատում փոխները. ա- նոնք մարդ չեն, եթէ մարդ չեն, ինչէն է որ մարդու կը նմանին շատ անգամ:

Նուա՞ղ մարդ են մեր ազգ. թիկ- նաթոռները, պատրիարքարանի պաշ- տօնեաները, վարդապետները և քա- հանաները, Արիստակէս Գասպարեա- նը, Ղազարոս Զրպլաբեանը, Միհր- դաս Հայկաղը. Արշարունի սրբա- զանը, Անձէտ Բիզան, միսրիշար- ները, Բիթը, Միքէլ Մսերեանը, Բի- ընճիճիգատի Արիթ պէյը, Երջըզականն Տօթթ. Տաղաւարեան, Պարսից Շահը, Արմենակ Ինճէեանը, Բոպէր Եաղը- ճեանը, ընկեր Տիրայր վարդապետը, Տիրայր Զաւենը, Հիւսէյին Ճահարը, Գարեգին Կողիկեանը, Յարութիւն Պատրիարքին նախկին մանուկը, ջեօթիկները, պէքճիները և բոլոր այս կարգին վրայ գտնուողները:

Մարդ չկայ. ա՛ս իմ յայտա- րարութիւնս է. դո՛ւք կրնաք տա- րակարծիք ըլլալ և յսել որ Թուրքիոյ մէջ քառասուն միլիոն մարդ կայ... ընդ հոլանաւորութեամբ Բիթին:

Բայց ինչպէս որ ճաշակները և հա- յերուն խնդիրները Խորհրդարանին մէջ... անվիճելի են, նոյնպէս անվի- ճելի են նաև իմ տեսութիւններս՝ ինձի համար. բանութիւն չէ՛ք կրնար բանեցնել իմ վրայ և ջարդի զրոյցով մը՝ ստիպել ինձի՛ Ընկեր Կի- կոս, որ չարաթ իրիկունները շապիկ և Բօմբիէին ծրագիր փոխելու պէս... կարծիք փոխէ և ընդու- նի թէ՛ մարդ կայ Թուրքիոյ մէջ: Ճի՛շտ է մարդ կայ. բայց... Մարդ ալ կայ, մա՛րդ ալ կայ: Ինչպէս որ քիթ ալ կայ քիթ ալ:

L'AFFAIRE JÉRUSALEM

(ՆՄԱՆՈՂՈՒԹԵԱՍԲ ՏԻԿ. ԻՄՊԵՐԻ ԽՆԴՐԻՆ) Ի վերինն Երուսաղէմ ի... բնակարանս հրէշ... սովկաց. ուր միտանք կան ծերացեալք... Ս. ԳԻՐԳ

ԱՆՈՒՔ ՈՐ ԵՐՈՒՍԱԿԵՄԻՆ ՇՈՂՆՅԱՆ Արդո՞մն Իմաստուն... անուն մը:

Բրիտանոս... խաչ մը: Հայերը վանք մը: Ետֆայիք փորթուգալներ: Նա 100 ոսկի և քանի մը հատ Սաղիմական օրացոյց, վահան Թօշիկեան 60 ոսկի. քանի մը բաժնեգին և մէկ տուգինս Եա- ֆայի փորթուգալ:

Արամ Անտօնեան նոյնչափ դու- մար մը և Եղիշէ վարդապետին հակառակութիւնը:

Արիկ Մուպահեանեան երեք հատ 50 ոսկինոց չէք... Եղիշէ վար- ղապետէն, քանի մը սնտուկ փոր- թուգալ, Մատթէոս վարդապետի այցելութիւնները, մէկ քանի հատ սաթէ համրիչ, ուրիշ մանր մունր իրեղէններ և... մեծ ու անկաշառ մարդու տխուրը:

Սմբատ Բիւրատ... տանեակնե- րով ոսկի, Փիւնիկը հրատարակելու

չափ դրամագլուխ և Դեռոնդ վրդ-ի համակրութիւնը:

Եր. Սրբաքէչիսանկեան, մէկ քանի անգամ ճաշ... Երուսաղէմա- տան մէջ և intimate տեսակցու- թիւններ Չիլիսկիբեան վարդապետի հետ:

Յովհաննէս Գայսէրեան... պահա- րանի մէջ ներփակուած պանզօթ- ներ՝ բաժնեգիններու փոխարէն:

Բասիմ այցելութիւններ և... գլխիցուեր:

Արչակ Ալպոյաճեան... շաբաթը մէկ քանի այցելութիւններու փոխա- րէն ֆրանսական ոսկիներ և ճաշեր՝ միշտ Երուսաղէմատան մէջ:

Տիգրան Եղիշէեան... սըլիս սըլիս այցելութիւնները՝ Եղիշէ վարդապե- տին և մեծ համբաւ... Երուսաղէմի խնդրին մէջ:

Օրմանեան քանի մը հազար, և քաղաքով առատ շիւթ:

Մանկուծի եղս. Երեք սնտուկ զանազան հնութիւններ, նալընները (սատափէ), և ձեռքի տակէ նը- ւէրներ, ճաշեր, զիններ և խըն- ջոյքներ:

Պատրիարքարանի դիւանապետ- ները... ոսկեզօծեալ օրհնութիւններ այն ատենի Յարութիւն Պատրիար- քէն:

Սալիկ Կիւլէսէրեան... կանոնա- լոր շարաթական մը և միքիֆիթի- գալ:

Եղիշէ վրդ. Չիլիսկիբեան... Պոլսոյ փոխանորդութիւնը:

Արրահամ Այվազեան... եայլ մը որուն վարձքը Երուսաղէմատունէն կը վճարուի:

Յակոբ վարձապետեան... 70 ոս- կի, նարինջ և օրացոյց թէ Դեռոնդ վ. էն և թէ Եղիշէ վ. էն:

Տիգրան Արիփար... մօտաւորա- պէս 30 ոսկի և մէկ քանի օրացոյց: Բիւզանդ Բէչեան... օրհնութեան կոնդակներ Յարութիւն Պատրիար- քէն և ոսկեզօծեալ «մնաք բարով»- ներ Եղիշէ վր. էն:

Գարրիէլ Կորատունկեան... թան- կագին մատանի մը, կ'ըսուի, և ամէն առտու գլխից ցաւ այցելու- թիւնները... Արրահամ Այվազեանի և Մատթէոս Գայսէրեան ու Չիլիս- կիբեան վարդապետներու:

Աւետիս Սուրէնեան... փաստա- բանութիւնը՝ Դեռոնդ վարդապետի: Մարկոս Կաթանեան... շաբաթ երեկոյեան այցելութիւններ... առաջ զէպի Գում Գարու, այժմ զէպի Շիլի:

Յակոբ տէր Յակոբեան... երեք ոսկի հավաէն:

Եր. Տէր Անդրէասեան երկու կողմին տրուած այցելութիւններու փոխան... այցելոյններ:

Պարոյր Բէչեան... յաճախակի այ- ցելութիւն և Երուսաղէմատան սե- զաններու նախագահութիւն:

Աւետիս Բէլլաքեան... 3000 ոսկի և բարեհամբաւ անուն մը:

Արիստակէս Գասպարեան (բան մը առած չէ եղբ):

Մինչև և հոս gros lot շահողներն են, իսկ ասկէ վերջինները ամօթի շահողներն են:

Պարոյր Բէչեան
Եր. Թօլայեան
Մ. Պապօնեան
Գ. Պոյաճեան
Գ. վրդ. Պալազեան
Գումգարույի նախկին փոխ Սալիս:

Պատրիարքարանի բարագանները: Գրիգորիս Եպս. Յովհաննէսեան: Արչակ Բէչեան:

Արմենակ Ինճէեան:
Պ. Մանիկեան:
Անտոն Սագաեան:
Ենովք Արմէն:

Յովհան Փալազաչեան:
Վահան վ. Պարտիզակցի:
Սմբատ Բիւրատ... Որդի:

Եղիշէ Թորոսեան (Դահիթ)
Մամուրեան Որդի (Իզմիր)

Թղթատարական վերատեսչութիւն
Հեռագրական վերատեսչութիւն:
Մայր Եկեղեցոյ զարաց դասը:
Տպագրական նախկին տեսուչը:

Յ. Գ. Մրմբեան:
Մ. Մարեան:
Բ. Պողոսեան:
Գաղթականներէ ոմանք.

Աղբ. ժողովը... զբաղուածի նիւթ:
Անտոն Կէօշէօղլու:
Աշոտ Բէչեան

ԱՆՈՒՔ ՈՐ ԵՐՈՒՍԱԿԵՄԻՆ ԽՆԴՐԻՆ ՀԱՅ ԱՂԳԸ... ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Արդ ինչպէս կը տեսնէք մեր բոլոր Աղգայինները գրեթէ քանի մը տար- ուան մէջ, ա՛նգին գումարներ շա- հած են:

Եւ ընակած է որ շահողները մինչև Բրիտանոսի վերջին գաղտեան օրը երբէ՛ք չպիտի փափաքին որ այնքան շուտ լուծուի այս խնդիրը, որքան շուտ լուծուեցաւ խնդիրը՝ Պոս- նա Հէրսէքի:

Որովհետեւ մեծագոյն էնայու- թիւն է ասանկ շահաբեր աղբիւր մը մէկ հարուածով ցածքեցնել:

Բայց երբ մեր բոլոր Աղգային- ները քիչ ու շատ, երկու կողմէն ալ, Հաշուեպահանջներ և Հաշուե- լույսներ, — ամէնքն ալ իրենց տեղը կենան — մէկ մէկ քիչ բան շահեցանք և տուններու, թերթերու, բաժանորդ- ներու, փորթուգալներու, օրացոյց- ներու, ոսկիներու, թանկագին քա- բերու, կարեւոր ձեռագիրներու, օրհնութեան կոնդակներու ու ճան- կաշառքի համբաւներու տէր եղան,

պէտք է որ սա մեր խեղճ Աղգն ալ որ միակ վնասուողն է այս գործին մէջ ան ալ քիչ մը բան շահի...:

Ա մօ՛ռե ինսամբ ըսեր է Առնա- ւուտը:

Եթէ ձեռքերնուս գայ վանքն ալ, Յարութիւնն Պատրիարքն ալ, հնութիւններն ալ պիտի ծախենք որպէս զի այս անցաւոր այլսարհիս վրայ կարենանք հանգիստ ապրիլ Երուսաղէմի փարայովը:

Հետեւաբար՝

ՄԵՆՔ Կ'ԱՌՅՁԱՐԿԵՆՔ ԵՐՈՒՍԱԿԵՄԻ ԽՆԴՐԻՆ ԿԱՐԳԱԴՐԵԼՈՒ ՀԱՍՄԱՐ

Ա. — Զնչիլ Միալանութիւ- նը, սկսեալ Յարութիւն Պատ- րիարքէն... մինչև Երուսաղէմ սար- կաւազը և հրաման տալ, իրենց որ ուղած ապուրնին խառնեն. նոյն իսկ արտօնութիւն տալ պաշտօ- նական ատենութեան:

Բ. — Անտիջապէս Պոլիս կան- չել Աշոտ Եպս. ք, Ֆիքրին և Պէկ- եանը, որոնք վախերնուն անղերնին կ'ընեն և Եաֆայի մէջ այժմ հիւանդ պակոված են, ինչպէս հեռագրած են ... Զօրագիր:

Գ. Առաջին ասթիւ կաղմուկ երեք յանձնածողովներ և զանոնք իրարմէ մէկմէկ առիս վեքջերուսաղէմ զրկել: Այս յանձնածողովներու առաջինին պէտք է անդամակցին Դաշնակցական ընկերներ իրենց նախագահ կարգի- ւով Ընկեր Գարսն: Այս Ֆետայիական քննիչ յանձնածողովին հետ պէտք է ընկերանայ Տեսօրիքներու խումբ մը, որպէս զի երբ միաբանները ու- զեն այս յանձնածողովն ալ փախ- ցընել, մէկիկ մէկիկ վարի Երուսա- ղէմէն՝ վերինն Երուսաղէմ ճամբուին տեսօրի ճամբով: Երկրորդ յանձ- նածողով մը զրկելու է ամիս մը վերջը՝ Հնչակեան կուսակցութիւնէն կաղմուած և նախագահութեամբ Զէյթունցի վարդապետին: Եթէ այս երկու քննիչ յանձնածողովներն ալ չկարենան մէջէն ելլել, այն ատեն Արդուեան խմբակը զրկելու է, որ արդէն վարժ ըլլալով այս տեսակ գործերու, ամբողջ վանքը կը մարքէ և բանալին ու բազուկները կը յանձնէ Երեւոյի. ժողովին ձեռքը:

Դ. Այս առաջարկը անյազակ պէտք է գործադրել, որովհետեւ տինսիլիին հազարնուս իմանալը կե- լիր:

Իսկ այս ամէնէն վերջ եթէ կա- ըրի չըլլայ բանի մը նմանցնել վանքը, հաբկ է իրեւ վերջին մի- ջոց Երուսաղէմ զրկել... մայրաքա- ղաքիս բոլոր խմբագիրները... որ արմատէն վերջացնեն խնդիրը:

ՄԵՆՔ ԱՌՅՁԱՐԿԵՆՔ

Ասկէ զատ ուրիշ ճամբայ չկայ գուրս ելլելու համար Երուսաղէմի խնդիրն, խնդիր մը որ հազարաւոր ոսկիներ, հնութիւններ, սատափէ ցայլոցներ դուրս հանել տուաւ... Երուսաղէմի գանձարանէն:

Եւ հա՛ն թէ ի՛նչպէս կարելի է Երուսաղէմի խնդրին... վերջակէտը զնել և այս կերպով գտնել նոր ոսկիի հանք մը:

ԸՆԴՆԵՐ ԿԻԿՈ

ԳՈՂԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ-ԿՈՆԴԱԿ

Պատրիարքարանէ հետեւալ շրջաբեր- կան կոնդակը զրկուեցաւ մայրաքաղաքիս ե- կեղեցիներու Թաղ. Թորոնւորներուն:

Օճնիկ Շարչարունի, Արուսապան Կ. Պոլսոյ, ծառայ Աստուծոյ եւ սպա- սաւոր իր ջիղերուն. եւ այլ:

Ի գիտութիւն արգոյ մերազնէից կը ծանուցանենք թէ Երկնս որ թա-

գաւորն մեր Յիսուս Քրիստոս, որուն Աստուած երկար կեանք շնորհէ, մեր և ձեր լալագին, պաղատագին ու սրտաբաւ յազմանքները յսած է վերջապէս և անցեալ շարժու մէջ բարեհաճեր է մէկ քանի կաթիլ անձրեւ տեղացնել մայրաքաղաքիս վրայ։ Թէև եկած անձրեւը մեծ բան մը չէր, բայց բոլր է Աստուած ալ Սահմանադրական կղեր է և հին բռնակալութիւնները մէկ կողմ դրած է։

Աւստի՛ կը յանձնարարենք ձեր սիրելութեան որ հասնիք կիրակի օր, զիչերտան մայր Եկեղեցի (Ս. Թ.) ձեր եկեղեցիին մէջ, առանց լուսավարութեան և խոր մթնոլթեան մէջ Գոհարանական մաղթանքներ մատուցանել առ բարձրեալն Աստուած։

Տէր Յիսուս Քրիստոս, որ իր անունն գթութեամբ հովանոցաւ ճառնեցր... Ֆետայի կ'ընէ, Յիշատակը տուողները... բարեբար, Հիւրի փառանք մարտապետ, Սուրբանը՝ Սահմանադրական վեհապետ, Թուրքիան Սահմանադրական, ինծի... Տեղապահ և Ղազարոս Չպագեանը... ազգ. երեսփոխան, ձեզ փրկէ ամէն տեսանելի և անտեսանելի վտանգներէ, կնկան փորձանքներէ և Գընայրի յորձանքներէ. ներէ ձեր... կէս գիշերին ետքը գործած բոլոր մեղքերուն, փրկէ զձեզ ամենայն... տալիսալուսնէրէ և պոչպոզագներէ. ազատէ ձեր բանտարկեալները... երբ անոնք զլիսացաւ հանդէսներու մէջ բանտարկուած են. օրհնէ ձեր աշխատութիւնները... գիշերային թէ ցերեկեայ, պահպանէ... Գորաքէօյի կամարին վրայէն և Սասգիւղի շոգենաւներով ճամբորդած միջոցները, կատարէ ձեր բոլոր... հազար ոսկի-նոց փափաքները և վճարէ... ձեր ապատիկները. գրկէ՛ ձեր բոլոր ուղածները... և չուզածները, պահպանելով ձեզ գիշերային... Կանքիսիմի այցելուներէ։ Տէ՛րն Տիեզերաց, Աստուածն Աստուծոյ, Արարիչ ամենայն կենդանեաց և մեռելոց արժանացնէ ձեզի վարի երուսազէ՛մի ոսկիներուն և վերի երուսազէ՛մի... ապարանքներուն։ Ա. Ան։

Մնամբ աղօթարար Աթոռագ. Կ. Պոլսոյ ՇԱՐՇԱՐՈՒՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Աղ Տ Ա Վ Ն Ե Ր

ՁԱՐԿ, ԲԱՅՑ ՄՏԻԿ ԸՐԷ՛

ԳՈՒՐՇՈՒՆԼՈՒ ԽԱՆԻ ԿԱՅՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ (Չայն վայրենացի հետեւողութեամբ)

Այս օրերս վերանշէրի, Թօքիոյի, Հասկէլիստանի և Մեծ Արմատի մէջ զրոյց կը շրջի թէ՛ մեր կայսրութիւնը կիօյա կամ իբր թէ, նոյն տեղերու հարուստ ծարունցիներուն և Չուլուններուն մէկ գանկը պատրաստած և որոշած է անոնցմէ հաւաքարար 15,000 ճարտնական ոսկի պահանջել, Հայ ազգը երջանկութեան մէջ պահելու և... եթէ յաջողի անձրեւները արմատէն գողրեցնելու համար։

Բայց... Նկատելով որ մեր կայսրութիւնը իր պիւտճէին բացը գոցելէ վերջ տարեկան 60 փր. ալ շահ մը կ'ունենայ։

Նկատելով որ 15,000 ոսկին սալաթայի փր. անգամ չէ մեղի համար։

Նկատելով որ՝ առնելէն վերջը հարուստներուն քաճային բանալին առնելու է որ բան մը որթէ։

Նկատելով որ հարուստները աւելի կը նախընտրեն իրենց հոգին սատանային տալ քան թէ՛ քանի մը հազար մեր կայսրութեան։

Նկատելով որ նապաստակեան, Ալիբեան և Արեւեար էֆ. ները... մեռեալ օրինակներ են մեր... բարի նպատակին։

Նկատելով որ շանտաժիստութիւնը մի վատ պան է...

Որոշեցինք.

Թուցիկներ չինել և թոցնել վերջիչեալ երկիրներու վրայ, յայտարարելով որ մեր կայսրութիւնը միայն լիկալ միջոցներով պիտի պարպէ... Վերանշէրի, Թօքիոյի, Հասկէլիստանի և Մեծ Արմատի հարուստներուն... գրպանները։

Հետեւաբար գիւրին է գուշակել թէ... դեղին հանքերը դեռ փորուած չեն և թէ՛ եղածը ուրիշ բան չէ եթէ ոչ... շահագործուելիք գետնին նախնական հերկումը։

(Կայսրութեան կնիկ)

*** ԽՕՍԲ ԱՌ ԱՐԻՍՏԱԿԷՍ ԳԱՍՊԱՐԵԱՆ. - Տեսա՞ք մի անշահախնդիր և պատուական ազգ. երեսփոխանը։ Տեսա՞ք մեծ ազգասէր՝ յա՛ Արիստակէս Գասպարեանը, որ կ'սպառնայ մեզի հետեւեալ կերպով և չարաթ օրուան Բիւզանդիսի մէջ «գիտացած ըլլաք հա՛ Մամուլի հին կանոնագիրը դեռ կը մնայ ձեր խորը կ'անիծեմ»։ Եւ ասիկա ինչու համար գրիտէ՛ք. որովհետեւ երեւան հանած էինք թէ՛ այդ մեծ ազգասէրը որ ամէն բանի մէջ քիթը կը խօթէ՛ որ ինքզինքին ազգասէրի խըյախ հովեր տուած է, Բերայի Կալուածոց Հոգաբարձութեան սպաննացի է՝ «Իլապար» ընել ազգ. կալուածի մը մէջ եղած մեծակ մտնելու։ Ասիկա կ'ուրանայ. սո՛ւտ է կ'ըսէ, թէ և իր վկայութեան կոչած փաստաբան Սիւնանեան էֆ. ն երէկ Մանգուսի մէջ երեւան հաներ է բռն ճշմարտութիւնը և Արիստակէս Գասպարեանի իրական գոյնը։ Իսկ մեծապատիւ Ազգասէր Գասպարեան էֆ. իր հարցնեք այժմ թէ ինչու չարաթ օրիւնազանցի մէջ պատասխաններ է միայն Ծաղիկի մէկ հարցումին և բոլորովին անտես առել է, ճիշտ անոր տակ գտնուած երկրորդ հարցումը. — «Մկրտիչ կա. վեհապետեանը Ատանայէն ո՞վ Պոլսի քարտէլ տուաւ»։ Արդեօք մեծ ազգասէրին աչքին վրիպէր է այդ երկրորդ հարցումը։ Թո՞ղ հաճի աս ալ լուսարանել որ թէ մենք, թէ Ազգը և թէ Ազգ. երեսփ. Ժողովը... մութի մէջ չմնան։

*** Տրապիզոնի Աւաջնորդը հրաշալի մարդ է. միթիւնկի մը մէջ՝

իբրեւ օսմ. Գօթիչէի անդամ և Բօմիդէականներ ներկայութեան, յայտարարել է ըսելով թէ «ես իմ կեանքս ձեզի շուրթած եմ. բայց ասոր փոխարէն պիտի խնդրեմ որ դո՛ւք ալ ինծի պաշտպանէք»։ Ա. Ֆեքիմ էմինով էլ վրդ. անա՛ հիւսայ բուն տարրից մէջ ևս. ճիշտ իմ մը ճիշտութիւններու մէջ կը վայլէ։

*** Ո՛չ Անձէտ Րիզա և ո՛չ ալ Հիւսէյին Հիւրի բանէ մը խապար չունին եղեր. Միզան կ'ըսէ թէ՛ Սուլթան Համիտ ինք անձամբ գալու էր Սորբորարան Սաթթը Հիւսայունին օրը, եթէ այսքան տարրական բաներէն ալ տեղեկութիւն չունին, ինչիս վտրշապետը և ինչիս նախագահն են։ Սորբորա, բանէն մեծ ո՞վ կայ. այս պարագան կ'ուզենք հասկնալ։

*** Կովկասահայ նոր խումբը տուաւ իր առաջին ներկայացումը։ Օր. Սաթթեիկ Արամեան, այդ քընքոյ, շնորհալի, բայց կարող ու տաղանդաւոր դերասանուհին հիւսցուց մեզի. այս առթիւ կայսրութեան Սորբորա զինքը բարձրացուց Հայ արուեստագիտուհիներու կաճառին նախագահութեան պաշտօնին, կ'արժէ այս խումբն ալ վաշելի, որ իր մէջ Վրոյը ունի, Աւետեանը ունի, Արուստեանը ունի և ճոխ ու նոր րեքերքուար մը ունի։

*** Չենք գիտեր թէ Չոր Աղբիւրի թաղական ընտրեցին Րիչիկ Մահար. եթէ ընտրեցին վայ մեղի. եթէ չընտրեցին՝ վայ իրեն։ Ամէն պարագայի մէջ չենք գիտեր թէ՛ նախկին գանձանակի մասնախումբին հայոցոյ ղեկիչները, ինչո՛ւ այժմ պնակալէզութիւն կ'ընեն. ինչո՛ւ. ինչո՛ւ. ինչո՛ւ. Այս «ինչո՛ւ» ներքին պատասխանը ստանալու համար մեր խովուչի ղեկիչն պիտի գիմենք։

*** Անցեալ օր գրած էինք թէ Արշարունի Ս. փոխանակ աչքը մամուլի վրայ բանալու, թո՞ղ ականջները բանայ և լսէ թէ ինչ կ'ըսեն իր Կ. Մ. ին տունը մնալու մասին, այն Կ. Մ. ի մասին որ նշանաւոր Նէմիզապետներու բարեկամը ըլլալուն պատճառաւ անոնց տունը ձրի կը նստի Գատրգիւղ։ Այսօր կուգանք յայտարարել թէ խալիկերը էին անցեալ օր՝ և մենք խաբարեով անձանօթ թղթակցի մը խօսքերէն, ըսած էինք թէ Կ. Մ. ձրի կը նստի Նէմիզապետներու տունը, ընդհակառակը իր փարայով կը նստի, թէ և ան բարեկամ է Նէմիզապետներու, բայց շատ մը Հայեր, և Շահրիկեանի պէս Հայեր, իտամէ ազատած է իր պաշտօնավարութեան օրով։ Կ. Մ. ազգատեսց մը չէ, այլ ազգասէր մը։ Անոնք որ կրնան ասոր հակառակը պնդել, մենք պատրաստ ենք արձագանքը ըլլալու։

(Ծ. Խ. - Վերի տողերուն համար տարբեր չենք առած)

*** Տիրար Արիստակէս էֆ. Գասպարեան (յարգանքով խօսինք) կ'ըսէ որ ինք կրնայ գատ բանալ, թէ ո՞րչափ ու Մամուլի ազատութիւն կայ, բայց մինչեւ նոր կանոնագրին ելլելը՝ հինը կը գործադրուի

Կ Ր Դ Ա Յ Է Ք Մ Ե Ր Դ. Է Ջ Ը

«Կալուած» ի եւ «Շաղիկ» ի սիւրբիքը սրամիտ եւ շահաւետ

միշտ և հ'ն կանոնագրին տրամադրութիւնները կրնայ իրագործել տալ մեր մասին։ Ահա՛, եզրաբք, մէկն ալ որուն շատ քէյֆին չէ գացեր Մամուլի ազատութիւնը։

*** Վերջապէս կարգ մը թուրքերու պօլսոց տեղը իսկաւ և Գեոսարոյ առաջնորդն ալ յանցաւոր նկատուեցաւ՝ վերջին դէպքերուն մէջ։ Անանկ է ևս՝ քառութեան նոխազ մը պէտք է. ինչո՛ւ հայ չըլլայ ասանկ դործի մը մէջ։ Թուրքիա Աստուծոյ համար, մասնաւորաբար ասանկ պարագաներու մէջ, հաւասարութիւնը կը պահպանէ։ Ողջ ըլլա՛յ։

*** Հիւսէյին Չահիտ մեծ մարդ է. իր թերթին մէջ կը գրէ թէ՛ Անատուրի մէջ ո՛չ սով կայ, ո՛չ թշուառութիւն, ո՛չ մէկ զուլում. ընդհակառակը Անատուրի Հայերը ամէն օր պիւթթէկ, Ֆիլէթօ, Ֆրանսէլա հաց ու յալվետ կ'ուտեն և մարսելու համար շաւիւրներ կը խմեն։ Երբ կ'ըսեմ թէ՛ Հիւսէյին Չահիտ պոչ մարդ է. կ'ուզէք հաւատացնել ինծի թէ... Ֆրսուրի պէս լեցուն է։ «Վայ քեզ քաղաք, որ թագաւորը մանուկ է»։ Ասիկա ըսելու ձեւ մըն է, եթէ ոչ անանկ մանուկի նմանող բան չկայ հոս։

*** Անձէտ Րիզա յայտարարել է ի պատիւ օսմ. քօմիդէի տրուած հացկերոյթի միջոցին, «Կառավարութեան ձեւը փոխուեցաւ, Սորբորանը գումարուեցաւ, աղէկ դահլիճ մը կազմուեցաւ բայց երկրին ընդհանուր վիճակը չբարեփոխուեցաւ»։ Անձէտ Րիզա պէյէ կը խնդրուի որ այս խօսքը ոսկեղծեալ խոշոր տաւերով գնէ՛ Սորբորանին ճակատը և հատ մը վարչապետին ու հատ մըն ալ թագալիմը Վագրախն զրկէ։ Միայն այդ տեսակ ճաշերու միջոցին եթէ արտասանուին այդ խօսքերը, չարամիսներ պիտի կարծեն որ... գինիի աղդեցութեան տակ ըսուած... խօսքեր են։

*** Տ. Տ. Սուրէն արքեպ. Պարթեւեան խլիլա ընդունելութեան արժանացել է Աղեքսանդրիոյ մէջ և խառնակութեան առաջին տասիճան շահեր է, դէմ խօսելով Գահակցականներուն մասնաւորաբար Շահրիկեանի մէկ խօսքը ի վեր հանելով առաջարկել է բոլոր մէկէն կախել։ Արդեօք իրմէ՛ Սուրէնէն պիտի սկզպինք կախել։

Մեծ ցաւով կը ծանուցանենք մահը Թեմիզոս Է. Զ. ՀԱՆԷՍԵՆԻ ԲԵՒԿ ԱՐԱՔԻՐԵՅԻ, որ մեծ ազգասէր մըն էր, մեծ սեղանաւոր մը, ընտանիքի հայր մը, ազգ. բարեբար մը, պարկեշտութեան մեծ տիպար։ «Կալուած»-ը «Շաղիկ»՝ միաբերան՝ իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալին գաւակներուն։

Վ Ա Ղ Ը «Կ Ա Վ Ո Շ», ՊՐՏԱԿԱՏԻՔ Ա. ՈՍԳՆԱՆ, ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՆԴՈՒՆ

«ՄԱՂԻԿ»—«ԿԱՎՈՐՈՇ»Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
(ԲԵՆԻՉԵՆԻՅԱՆԻ ԶՄՓ ԳՐԱԿԱՆ)

Մաղիկ եւ Կավոս միասին, արեւիկան, Պոլսոյ համար 80, վեցամսեայ՝ 45 դրուց: Մաղիկ կամ Կավոս՝ առանձին՝ արեւիկան 45 դրուց:

Մաղիկ եւ Կավոս միասին, արեւիկան, Գաւառի համար 100, վեցամսեայ՝ 60 դրուց: Մաղիկ կամ Կավոս՝ առանձին՝ արեւիկան 60, վեցամսեայ՝ 35 դրուց:

Մաղիկ եւ Կավոս միասին, Արասահմանի համար արեւիկան 52 ճր. վեցամսեայ՝ 43 ճր.: Մաղիկ կամ Կավոս՝ առանձին՝ արեւիկան 45, վեցամսեայ՝ 8 ճրանք:

Ոչ ոք գորով բաժանարդ կ'արձանագրուի:
Իրար կանխիկ չլրկողներ եւ մեր փարսն ուսողներ կ'անցնենք Է... կը խայտառակենք:

La Grande Fabrica



1908Ի ՉՄՐԱՆ ԵՒ ԱՇՆԱՆ

ՆՈՐՈՅԹՆԵՐԸ

Փ Ն Տ Ո Ե Ց Է Ք

Շ Թ Ա Յ Ն

Վ.Ա.ՃԱՌԱՏԱՆՑ ՄԷՋ

ՊՈԼԻՍ ԵՒ ՂԱԼԱԹԻՍ



ՎԱՅԵԼՉԱՍԷՐ ԿԻՆԵՐԸ

ՈՐՈՆՔ Կ'ՈՒՋԵՆ ՊԱՀՊՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԵՏԻ Է ԱՄԷՆ ՕՐ ԳՈՐԾԱԾԵՆ

ՃՄՄԱՐԻՏ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԴԱԼ ՀՆՏԵՒԵԱԼ ՏՈՂԵՐԸ

ԿՆՈՋ ՄԸ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ կատարեալ չլրար առանց գոյնի մարդութեան Բոլոր այն տիկիները, որոնք հոգը ունին այս թանկագին ձիւրքերը անկորուստ պահելու, պէտք է բացարձակապէս մերժեն դորձածութիւնը այն ամանագին արտադրութիւններուն որոնք չունիւն իր ունիւններով ծախու կը հանուին: Գործածուած նախնական նիւթերուն ստորին տեսակէ ըլլալն է որ ներքի կ'ընէ այդքան աման ծախել զանոնք: Այս պատճառաւ նուազ ըստորին տեսակները պատրաստուած են մեղրամոմով կամ օճառով, որոնք օդին մէջ կը չորնան, եւ միւս տեսակները, աւելի վտանգաւոր մորթին համար, կ'պարունակեն այն տեսակ ճարպեր որոնք կը թոնին եւ քիչ ատենէն առաջ կը բերեն անդամանելի կարմրութիւններ եւ խորշոմներ:

Միայն ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ հնարուած 1860ին, զուտ նշայի կլիւստրոնով բազադրուած՝ առանց ո՛ր և է նիւթի, իրապէս առողջապահական արտադրութիւն մըն է. լոմանդակ աշխարհի մէջ լոլորվայելաւոր կիներէն ընդունուած է և նոյն իսկ իր անհուն յաջողութեան պատճառաւ է որ բազմաթիւ կեղծ նմանութիւններ երեւան կ'ըլլեն ամէն օր: 1900ի տիեզերական Արուեստահանութեան մէջ արժանացած է Ոսկի Միտալի:

Ի հարկէ ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ գինը աւելի բարձր է կեղծ պատրաստութիւններու գինէն և ասոր պատճառը իսկապէս իր նախնական նիւթերուն ազնիւ տեսակէ ըլլալն է, որովհետեւ բոլոր ծախողները կը խոստովանին թէ հակառակ անոր համեմատաբար բարձր գնոյն՝ նուազ կը շահին նմանօրինակ ուրիշ տեսակներու վրայ:

Բնաւ մի վարանիք ուրեմն պահանջուի ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ միշտ լաւ ուղարկութիւն ընելով վերի վաճառանքին և յատկապէս իր խոստարդ ու թարմ պիտի մնա քիչ միջնակու ձեր դրացունիքը, պիտի պատահանի ցաւելով իրենց խնայարկութեան համար:

ՄԵՐ ՍԻՒՐԲՐԻՉԸ
ՍՐԱՄԻՏ ԵՒ ՇԱՀԱԻՈՐ

***** ՊԱՏԵՐ ԵՆԴՆԱԶԸ
ԿՐՆԱՐԵ ՊԱՏՐԵԱՐԸ ԸԼԼԱՅ ԵՒ
ԻՆՉՈՐ: ՊՐՈՒ ՊՈՒՏՈՐ Է՛ ԸԼԼԱՅ
ՊԱՏՐԵԱՐԸ ԵՒ ԻՆՉՈՐ *****

Շարք մը պայմանաւոր, է՛ն աղտոք, է՛ն կարճ էւ է՛ն սրաւ միտ պատասխանը տուողը պիտի ստանայ իր տուգինն մը լուսանկարը, քարդ-բազալի ձեւով: Երկրորդ մրցանակը շահողը՝ կես տուգինն: Պատասխանները կը հրատարակուին շարք օրը, իսկ հարցումները կ'ըլլան երկուշ թիւ: Պատասխանները պէտք է զրկուին մինչ արքա օր:

Իւրընդունաւ խանի կայսրութեան մասնաւոր եւ միակ լուսանկարիչն է

ՍԻՄՈՆ

414, Բերա, Շիսակ-Ճամբայ, 114
Ուրեմն, Տիկիներ, Օրիորդներ եւ Պարոններ միտքեր իդ արկեր եւ պատասխանեցէք:

Մեր Ա. Է. Բ. մրցանակները շահողները, պիտի երբան հոն լուսանկարութեամբ:

Ամենէն պրամիտ պատասխան տուողին լուսանկարը պիտի հրատարակենք մեր քերթին մէջ:

ՀԱՅ ԶԻՆԱՎԱՃԱՌ ՂԱՆԱԹԻՈՅ
ԶԱՐԵՅ ՊԵՆԿԼԵԱՆ

Ուղղակի Ամերիկայէն բերիլ տուած եւ ամենաբնասիր զէնքեր, վաճառելի կանխիկ եւ անսական վճարումներով: Կ'իմեցէք Ղալաթիա, Գարախոյի բաղնիքին կից քիւ 57 վանառանցը:

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՎԱՐԵՒՈՐ
ՇԻՇԵՐ

(Verres pharmaceutique)

Դեղարաններու և դեղօրէկց վաճառականներուն համար մասնաւոր շինուած շիշերը մինչև հիմա Հրեայ վաճառական մը մօտօքոյ ըրած էր: Այժմ ուրախ ենք յայտարարելու որ արար Մկրտիչ Պօղոսօֆ (Աշըր Էֆէնտի խան, Թիւ 27 գրասենեակը) ձեռնարկած է այս գործին և ունի ճոխ ու ալլազան մթերք մը այդ կարգի ամէն կերպ շիշերու և կարող է մրցիլ ամէն կերպով: Վտան և ապահով ենք որ թէ՛ Պօղոսօֆ և թէ՛ զաւառի մեր բոլոր Հայ դեղագործները և ճոկիսքները պիտի փութան իրենց գնումը ընել այս Հայ և այս ճիւղին մէջ մէկ է-ստիկ առևտրական տունէն, քաջալերելու համար Հայ ձեռնարկուն որ միևնոյն ատեն ատանութիւնը բնաբան ընտրած է իրեն:

TH. MOURIADES

ԲԵՐԱ, ՊՕՆՄԱՐՇԷԻ ԳՈՎ ԹԻԻ 273

ԿՕՇԻԿԻ ՄԵՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ'ուզէ՞ք շիշ, բարձու և դիմացկուն կօշիկներ հագնիլ, ապսպրուած կամ պատրաստ, դիմեցէ՛ք վերի հասցէին և հոն պիտի գոհացնեն ձեզի՝ կատարեալ դիւրամաշէլի պայմաններով: Ոտք մը՝ առանց գեղեցիկ ու վայելուչ կօշիկի՝ շա՛տ ազեղ բան է, մանաւանդ կիներուն քով: Ասիկա միւսքերնիդ դրէք և շօղիմեցէք Բերա, Պօնմարշէի քով, Թիւ 273 Գ. ՄՈՒՐԻԱԾԷՍԻ:

Անկարելի է որ ընտ իք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ քենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ ան մար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մ' քենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի ազդեր մըն է:

Ս Ի Ն Կ Է Ր

Հայրաքիչ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ The Singer Manufacturing Co մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բոլոր վանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

- Զեպի, ուրի, ու ուրի եւ ձեռքի միտեգամայն մեքենաներ կը գտնուին:
- ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝
- ԲԵՐԱ. 1. Մեծ փողոց, Պօն Մառշէի դէմ, Թ. 343 և 343 կրկին.
- 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւնին դէմ.
- ԿԱԼԱԹԱ. 1. Սինկեր խան, Թիւնէլին հետեւ.
- 2. Գարաքէօյ, Թրամիշէի կայարանին դէմ.
- ՊՈԼԻՍ. 1. Սուլթան Համամ, Թ. 2
- 2. Սուլթան Պէյլաղիտ, Թրամիշէի կայարանին դէմ, Թ.
- ՍԻՒՐՍԱՐ. 2արշը Պօյու, Թ. 120.

ՀԱՐԱԲԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Դասերը եւ նորագոյնիւնք ձիւրքերը կատարեալ երախաւորութիւն: Մասնաւոր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ: Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղի կը գտնուի Բերա, Մեծ Փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղզուրու տունը: